

**«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/8

23 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Ամադեդա» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27.03.2014 թ-ի թիվ 1004500 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.11.2013 թ-ի թիվ 1004500 հանձնարարագրի համաձայն «Ամադեդա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27.03.2014 թ-ի թիվ 1004500 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով եկամտահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 17.464.752 դրամ: Ստուգման ակտի դեմ ընկերության կողմից ներկայացվել է գանգատ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ընկերության նախքին տնօրեն Վ.Անդրեասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանի կողմից 24.09.2013 թ-ին հարուցվել է թիվ 62209713 քրեական գործը, որը գտնվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության վարույթում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ընկերության նախքին տնօրեն Վ.Անդրեասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 24.09.2013 թ-ին հարուցվել է թիվ 62209713 քրեական գործը, որը գտնվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության վարույթում, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:


Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Ամադեդա» ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Ամադեդա» ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՅԱՆ